ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2020թ. թիվ 228-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱԲԼՈ ՏԻՉԻՆԱՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1641-Ն որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման թիվ 19 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. նոյեմբերի 21-ի N 1641-Ն որոշման 1-ին կետի 3)-րդ ենթակետի:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը:

3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Մարգարյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

10/02/20

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 7
ք.Վանաձոր

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. փետրվարի 7-ի
թիվ 228-Ա որոշմամբ

Կազմված է «___» _____2020թ.
Բաղկացած է 2 էջից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ 08.09.2003թ.
ԳՐԱՆՑՄԱՆ N 222.210.00192
ՀՎՀՀ 06910137
_____ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ _____ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«____» _____ 2020թ.

_____ _____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱԲԼՈ ՏԻՉԻՆԱՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. 25-րդ կետում և 31-րդ կետի 1-ին ենթակետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով,

2. 33-րդ կետի 4-րդ ենթակետը հանել,

3. 33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին ենթակետով. «13.1) քննարկում է դպրոցի ծնողական խորհրդի՝ տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկը և այն, իր դիրքորոշման հետ միասին, ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին.»,

4. 39-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) խորհրդի յուրաքանչյուր նիստից հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, նիստի արձանագրությունը ներկայացնում է հրապարակման՝ դպրոցի պաշտոնական կայքում.»,

5. 69-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«69. Տնօրենի բացակայության, ինչպես նաև տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը՝ ըստ ենթակայության, հաստատության տնօրենի պաշտոնակատար է նշանակում տնօրենի տեղակալներից մեկին կամ հաստատության տնօրենի պարտականությունները կատարող այլ անձի, ով տվյալ հաստատության խորհրդի անդամ չէ: Տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում տվյալ հաստատության տնօրենի լիազորությունները դադարեցված անձը չի կարող նշանակվել նույն հաստատության տնօրենի պաշտոնակատար կամ պարտականությունները կատարող:»,

6. 77-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«77. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները:»,

7. 93-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է _____ գրանցված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության անբաժանելի մասը: